

**ԸՆԿԵՐԱԳԻՐՔ-ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻ ԺԱՆՐԸ ԺՉ –  
ԺԹ ԴԴ. Է. ՔԵՄՓՖԵՐԻ ALBUM AMICORUM-Ի  
ՕՐԻՆԱԿՈՎ**

**Լիանա Աղաբեկյան**

ՀՀ ԳԱԱ ԱԻ, հայցորդ

DOI: 10.56549/29537819-2023.4-204

**Բանալի բառեր.** *Դիվանագիտության պատմություն, արևելյան սկզբնաղբյուրներ, ընկերագիրք, Շիրվան, հայագիտություն, Կովկասագիտություն:*

ԺՉ դարից սկսած գերմանական մի շարք համալսարաններում ուսանողների շրջանում սկիզբ է դրվում գրական մի նոր ուղղության, որը շուտով տարածվում է նաև Գերմանիայի սահմաններից դուրս՝ Ֆրանսիայում, Նիդերլանդներում և այլ եվրոպական երկրներում՝ դառնալով ժամանակի կյանքի տարբեր բնագավառների մասին պատմող ամենաարժեքավոր աղբյուրներից մեկը: Խոսքը այսպես կոչված «Տոհմաբանական գրքերի» (das Stammbuch – Լ. Ա.) մասին է, որոնք հայտնի էին նաև *album amicorum* (ընկերության այբոմ) կամ ընկերագիրք անունով և իրենց բովանդակությամբ ավելի շատ նման էին հուշամատյան-օրագրի: Չնայած իրենց անվանմանը՝ դրանք ուղիղ իմաստով տոհմաբանական գրքեր չէին, չէին ներկայացնում հեղինակի ծագումնաբանությունը, այլ հիշեցնում էին օրագիր, որը պարունակում էր ոչ միայն հեղինակի ընկերների և մերձավորների, այլև այն հեղինակավոր անձանց գրառումները, որոնց հետ նա առիթ էր ունեցել թեկուզ մեկ անգամ հանդիպելու:

Այս գրքերի պատմությունը սկսվում է Վիտենբերգի համալսարանում ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, երբ ուսանողները խնդրում էին դասախոսներին՝ նշումներ անել կամ մասնագիտական դիտողությունները թողնել իրենց տպագրած գիտա-

կան աշխատություններում: Հատկապես մեծ ժողովրդականություն էին վայելում Վիտենբերգում դասավանդող այնպիսի նշանավոր հումանիստների կողմից արված նշումները, ինչպիսիք էին Մարտին Լյութերը, Ֆիլիպ Մելանխթոնը և այլք<sup>1</sup>: Մարտին Լյութերը, որպես կանոն շրջանավարտների հուշագրքերում մեջբերում էր մի քանի տող Աստվածաշնչից՝ ավելացնելով իր սեփական մեկնաբանությունները: Լյութերի պարագայում գրառումները միշտ լատիներեն էին: Նրան հաջորդած այլ հումանիստներ հուշամատյաններում աստվածաշնչյան մեջբերումները կատարում էին առանց սեփական մեկնաբանության: Հաշվի առնելով, որ ԺՁ դ. այս համալսարանում սովորողների ուսումն ուներ ընդգծված հումանիստական ուղղվածություն, դասախոսների՝ հուշագրքերում արված նմուշները հիմնականում մեջբերումներ էին դասական հունական և լատինական գրականությունից, որոնք միտված էին ուսանողների կրոնական և բարոյական կրթության ամբողջացմանը: Հետագայում ուսանողներն այդ գրառումներն օգտագործում էին նույնիսկ որպես երաշխավորագիր այլ համալսարան ընդունելության ժամանակ:

Գրեթե միևնույն ժամանակ արիստոկրատական շրջանակներում ընդունված էր դիմել այցելուներին, որպեսզի նրանք հյուրընկալողին պատկանող գրքում գրառում կատարեին և կիսվեին գրքի հեղինակի կամ կոնկրետ իրադարձության մասին իրենց տպավորություններով:

Արդեն ԺՁ դ. ընկերության կամ բարեկամության գիրքը լայն տարածում է գտնում հատկապես գիտնականների և ուսանողների շրջանում՝ ճանապարհորդությունների ընթացքում դառնալով նրանց անբաժան ուղեկիցը, իսկ ավելի ուշ աճող ժողովրդականություն է վայելում նաև արիեստավորների և արվես-

---

<sup>1</sup> Հումանիզմի ժամանակաշրջանում այս հուշագրքերի տարածման մասին մանրամասն տե՛ս **Walther: Das Stammbuch als Bestandteil humanistischer Kultur**, 2006, Folge 3:

տագետների շրջանում: Նշված ժամանակաշրջանում ուսանողները և ճանապարհորդ-գիտնականներն ճամփորդությունների ժամանակ իրենց հետ վերցնում էին դատարկ էջերով փոքրիկ գրքույկներ, որտեղ նրանց ընկերները, ծանոթները կամ համալուրսեցիները թողնում էին իրենց հուշ-գրառումները<sup>2</sup>:

Աստիճանաբար նման գրքերի հիմնական գործառույթը դառնում է տարածական և ժամանակային հեռավորության պայմաններում փոխհարաբերությունների պահպանումը:

Գրական այս ուղղությունը դեռևս ԺՉ դ. կեսին ակադեմիական միջավայրում ձեռք բերեց շարադրման հստակ կառուցվածք, որը պահպանվեց մինչև ԺԹ դարի սկիզբ<sup>3</sup>: Կանոններից մեկն այն էր, որ գրառում կատարողն իր տեքստը սկսում էր իրեն կամ իր տոհմը բնորոշող որևէ հստակ կարգախոսով, որին անպայման հավելվում էր գրառման վայրը և տարեթիվը, երբեմն՝ նաև կարճ տեղեկություն ֆակուլտետի մասին, որտեղ նա սովորում էր<sup>4</sup>: Գրառումը սովորաբար սկսվում էր “*memoriae causa scripsi...*” կամ «այս տողերը կարդալիս հիշիր. ...» արտահայտությամբ:

Ուշագրավ է, որ այս աշխատություններում գրառումներն արվում էին ոչ թե ըստ հեղինակի և հուշագրքում գրառումներ թողնող ծանոթների հանդիպումների ժամանակագրական հաջորդականության, այլ հիերարխիկ սկզբունքով: Սոցիալական ավելի բարձր խավերի ներկայացուցիչների գրառումները միշտ հա-

---

<sup>2</sup> **Kurras, Zu gutem Gedenken**, 1987

<sup>3</sup> Պահպանվել և տպագրվել են նման օրագրերի մեծաթիվ արժեքավոր օրինակներ: **Literatur im Lebenszusammenhang: Text- und Bedeutungskonstituierung im Stammbuch Herzog Augusts des Jüngeren von Braunschweig-Lüneburg (1579-1666)**, 2002, 375 S., տե՛ս նաև **Loesch: Der Freundschaft Denkmal**, 2003, 271 S.

<sup>4</sup> Ժամանակի ընթացքում այդ կարգախոսները փոխարինվեցին ընկերության ավրոմի հեղինակին բնորոշող կարգախոսներով /Լ. Ա. /:

վաքված են գրքի առաջին հատվածում: Ուսանողների գրառումները, որպես կանոն, տեղակայված են աշխատության վերջում<sup>5</sup>:

Հեղինակների կողմից կարևորվում էր նաև գրառումների գեղեցկությունը, ուստի հաճախ դրանք զարդարվում էին տարբեր թեմատիկ պատկերներով երբեմն նույնիսկ հայտնի մանրանկարիչների կողմից նկարազարդված<sup>6</sup>:

Album amicorum-ի՝ որպես նոր գրական ժանրի զարգացման հարցում լուրջ խոչընդոտ են դառնում ԺԷ դ. առաջին կեսին Եվրոպայում տեղի ունեցած քաղաքական զարգացումները, մասնավորապես՝ 30-ամյա պատերազմը (1618 - 1648 թթ.): Պատերազմի ավարտից հետո ընկերագիրքը գրեթե մոռացության է մատնվում և վերածնունդ ապրում միայն ԺԸ դ. կեսին՝ ենթարկվելով որոշակի փոփոխությունների:

Նախկինում album amicorum-ի համար ընդունելի դասական լեզուների կողքին ի հայտ են գալիս գրառումներ՝ աշխարհի ամենատարբեր լեզուներով, իսկ հայտնի հեղինակների աշխատություններից կատարված մեջբերումներին փոխարինելու են գալիս գրառումը կատարողների հեղինակային տեքստերը<sup>7</sup>: Արդեն ԺԸ դ. նկարազարդող մանրանկարիչների փոխարեն գրառումներ կատարողներն իրենք են ձևավորում իրենց տեքստերը հեղինակային նկարներով<sup>8</sup>:

Album amicorum-ները հաճախ արժեքավոր աղբյուր են ուսանողների և համալսարանների պատմության լուսաբանման

---

<sup>5</sup> Ընկերագրերի կառուցվածքի առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս **Schnabel: Das Stammbuch. Konstitution und Geschichte**, 2003, 728 S.

<sup>6</sup> Հուշագրերի նկարազարդումների մասին մանրամասն տե՛ս **Taegert, Edler Schatz holden Erinnerns**. 1995, 155 S.

<sup>7</sup> Մինչև 18-րդ դ. երկրորդ կես գերմանացի ուսանողների գրավոր ու բանավոր լեզվի ու կենսակերպի առանձնահատկությունների մասին տե՛ս **Objartel**, 2016, S. 105-126 :

<sup>8</sup> Պահպանվել են ջրաներկով, գծանկարներով, նույնիսկ ասեղնագործություններով զարդարված գրառումներ, որոնք խոսում են քննարկվող ժամանակաշրջանում այս ժանրի ունեցած կարևորության մասին (Լ. Ա.) :

համար<sup>9</sup>: Բացի այդ, ժամանակի ընթացքում այս աշխատություններում առաջին պլան են մղվում հաղորդակցության, մշակութային, պատմական, նույնիսկ քաղաքական խնդիրների վերհանումը: Հուշագրքերը հաճախ պարունակում էին նաև քաղաքական արժեքավոր հղումներ՝ իհարկե ոչ առանց հեղինակի սուբյեկտիվության: Բնականաբար երբեմն քաղաքական բնույթի գրառումներն ու մեկնաբանություններն ընկերագրքերում կրում են սիրողական բնույթ, քանզի գրված են ամենատարբեր մասնագիտությունների, ազգության, հետաքրքրությունների և քաղաքական հայացքների տեր մարդկանց կողմից: Քանի որ այս գրքերը հասանելի էին միայն մասնավոր շրջանակներում և, որ ոչ պակաս կարևոր է, գրաքննության ենթակա չէին, դրանցում կարելի է գտնել բավականին անկեղծ քաղաքական հայտարարություններ, որոնք կարևոր սկզբնաղբյուր են առաջին հերթին այս կամ այն նշանակալից քաղաքական իրադարձության ժամանակակիցների՝ մասնավորապես մտավորականների անձնական կարծիքը բացահայտելու տեսանկյունից: Օրինակ, ԺԷ դարի վերջով թվագրվող հուշագրքերում կան Փրանսիական Մեծ հեղափոխությանը վերաբերվող բազմաթիվ հիշատակումներ, ինչպես նաև հեղափոխականների մեծաթիվ մեջբերումներ<sup>10</sup>:

Album amicorum-ների շարքում կարևոր տեղ է գրավում ԺԷ դ. վերջին և ԺԸ դ. սկզբին բնագետ, բժիշկ, ճանապարհորդ, դիվանագետ Էնգելբերթ Քեմփֆերի (1651 - 1716 թթ.) հեղինակած բավականին ծավալուն բովանդակությամբ մեզ հասած հուշագիրքը, որը մասամբ պահպանում է նշված ժամանակաշրջանում album amicorum-ների ընդունված կառուցվածքը, սակայն միաժա-

---

<sup>9</sup> Նման հուշամատյան վարող որոշ հեղինակներ հետագայում մուտքագրել են նաև գրառումներ կատարած իրենց նախկին ընկերների հետագա կենսագրական տվյալները՝ այդպիսով պահպանելով մանրամասն տեղեկություններ ոչ այնքան հայտնի գիտնականների մասին:

<sup>10</sup> **Die Französische Revolution im Stift und die Tübinger Studentenschaft, Hiller, /1946-1947/, S. 34-48**

մանակ աչքի է ընկնում միայն իրեն բնորոշ, առանձնահատուկ գծերով<sup>11</sup>: Քեմփերի այս աշխատությունը քննարկվող ժանրի հնարավորինս ամբողջական պահպանված հրաշալի օրինակ է՝ հուշագրքերի կառուցվածքի, բովանդակության, նրանցում շրջանավոր թեմաների, գրառումներ կատարող հեղինակների ազգության և պաշտոնների, գրառումների լեզուների, արտաքին ձևավորման և այլ առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից:

Գիտնական Ալեքսանդր Փոն Հումբոլդտը Քեմփերից մեզ հասած այս աշխատությունն անվանում է «թանկարժեք մատուց» (“eine kostbare Reliquie”):

Քեմփերի ընկերագիրքը «Album amicorum» ժանրի կենսագրական ամենակարևոր աղբյուրներից է: Այն նաև հեղինակի կենսագրության կարևոր աղբյուրներից մեկն է, որն ուղեկցել է Քեմփերին 1674 - 1694 թթ.՝ նրա ուսանողության տարիներին, ինչպես նաև Շվեդիայից մինչև Ճապոնիա և հետո՝ Լեհաստան նրա համաշխարհային ճամփորդության ժամանակ:

Էնգելբերթ Քեմփերն իր հուշագրքի շարադրանքը սկսում է Լեհաստանում՝ Տորունում և Կրակովում սովորելու տարիներին: Շվեդիա տեղափոխվելուց հետո՝ Ուփսալա քաղաքի ակադեմիայում ուսանելու տարիներին, հեղինակը ծանոթանում է շվեդական արքունիքի բարձրաստիճան դիվանագետների հետ և 1683 թ. որպես բժիշկ ու պատվիրակության քարտուղար միանում դեպի ռուսական և պարսկական արքունիք ուղևորվող շվեդական առևտրական դեսպանությանը: Իր արևելյան ճանապարհորդության ընթացքում՝ 1683-84 թթ. Քեմփերը մոտ 20 ամիս ապրում է Սեֆյանների մայրաքաղաք Սպահանում, ճամփորդում ամբողջ Իրանի տարածքում՝ որպես շվեդական դեսպանության քարտուղար: Նրա տարբեր աշխատություններում, այդ թվում՝ հուշագրքում պահպանվել են մեծաթիվ արժեքավոր գեկույցներ այն

---

<sup>11</sup> **Kaempfer**, 2021, 512 S.

ժամանակվա Իրանի մայրաքաղաքի, Մեֆյան պետության վարչակազմի և պալատական կյանքի մասին: Քենսիֆերն Իրանում գտնվելու տարիներին նաև յուրացրեց թուրքերեն և պարսկերեն լեզուները, և այս փաստն էլ ավելի է մեծացնում նրա թողած տեղեկությունների պատմական արժեքը: Պատահական չէ, որ հուշագրքում պահպանված բազմատեսակ գրառումների մեջ ամենամեծ թվով գրառումներն արվել են հենց Պարսկաստանում (33 գրառում՝ N 70-102):

1684 թվականից նա եղել է Նիդերլանդական Արևելահնդկական ընկերության կողմից Հնդկաստանում աշխատող գլխավոր վիրաբույժը, որպես բժիշկ աշխատել և արժեքավոր գրավոր տեղեկություններ է հավաքել նաև Ճավայում և Սիամի Թագավորությունում:

Քենսիֆերը որպես բժիշկ է աշխատել նաև Ճապոնական կայսրությունում, որն այն ժամանակ դեռևս փակ էր օտարերկրացիների համար: Այսպիսով, Էնգելբերթ Քենսիֆերը դառնում է առաջին օտարերկրացին, որը մանրամասն ուսումնասիրել և գրի է առել Ճապոնիայի կյանքի ամենատարբեր բնագավառների մասին հարուստ տեղեկություններ՝ մինչ օրս համարվելով այս երկրի՝ ԺՉ դարի վերջին քառորդի պատմության ուսումնասիրության ամենաարժանահավատ օտարերկրյա աղբյուրներից մեկը<sup>12</sup>:

Հաշվի առնելով այն փաստը, որ Քենսիֆերի համաշխարհային ճամփորդությունն ընթանում էր շվեդական դեսպանության կազմում՝ որպես քարտուղար, առանձնահատուկ արժեքավոր են դառնում բոլոր այն քաղաքական բնույթի տեղեկությունները, որոնցում ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադարձ է կատարվում հեղինակի այցելած պետություններին, հատկապես Իրանին և Ռուսաստանին քաղաքական, ռազմական կամ դիվանագիտական տեսանկյուններից:

---

<sup>12</sup> **Kaempfer**, *History of Japan*, 1906, 3 vol.

Այս աշխատությունը արդարացի կերպով շատ բարձր է գնահատվել գերմանացի տարբեր ուսումնասիրողների կողմից, որոնք տարբեր ժամանակներում մասամբ կամ ամբողջությամբ համակարգել և խմբագրել են Քեմփֆերի օրագրերը: Քեմփֆերին նվիրված առաջին կենսագրական բնույթի աշխատության հեղինակ, գիտնական Կարլ Մայեր-Լեմգոն նրան անվանում է առաջին գերմանացի հետազոտող-ճանապարհորդ՝ կարևորելով Էնգելբերտ Քեմփֆերի ավելի քան քսանամյա ճամփորդության ընթացքում ստեղծված աշխատությունների կարևորությունը գերմանական գիտության զարգացման գործում<sup>13</sup>:

Քեմփֆերի՝ մեր կողմից դիտարկվող օրագրի առաջին ամբողջական հրատարակության հեղինակը ևս Կ. Մայեր-Լեմգոն է<sup>14</sup>:

2021 թ. հրատարակված “Das Stammbuch Engelbert Kaempfers, kritische Edition und Kommentar” աշխատության խմբագիրների և կազմողների կողմից հանգամանալից կերպով ներկայացված է նման ընտանեկան կամ ընկերական գրքերի առաջացման պատմական միջավայրը, աշխատության մեջ պահպանված հարյուրից ավելի ձեռագիր գրառումների լուսանկարները, յուրաքանչյուր գրառման տեքստը բնօրինակով, ինչպես նաև գերմաներեն թարգմանությամբ և հրատարակիչների արժեքավոր մեկնաբանություններով: Բացի այդ, ներկայացված են անձնանունների և օգտագործված հարուստ գրականության ցանկերը, նաև Քեմփֆերի քսանամյա ճամփորդության ուղին ներկայացնող քարտեզ, որը ներառում է նրա օրագրում հավաքված բոլոր նյութերի գրառման վայրերը:

Էնգելբերթ Քեմփֆերի «Das Stammbuch...»-ի ձեռագիր տարբերակը մինչև 1773 թ. պահվել է Քեմփֆերների ընտանեկան

---

<sup>13</sup> Meier-Lemgo, Engelbart Kämpfer, der erste deutsche Forschungsreisende 1937, 211 S.

<sup>14</sup> Meier-Lemgo, Die Reisetagebücher Engelbert Kaempfers, 1968, 182 S.



գրադարանում, այնուհետև մինչև 1820 թ. գրտնվել է Քրիստիան Վիլհելմ Դոմի տնօրինության տակ<sup>15</sup>: Վերջինիս մահից հետո ձեռագիրը ժառանգում է Դոմի դուստրը՝ Բեթթին: 1867 թ. Գերմանացի պատմաբան Էրնսթ Հելվինգը նշանավոր ձեռագիրը նվիրում է Դեթմոլդի իշխանական գրադարանին: Գիրքն առաջին անգամ պաշտոնապես ցուցադրվել է 1990 թ. Լեմգո քաղաքում: 2014 թվականից Քենփֆերի հուշագիրքը պաշտոնապես համարվում է Դեթմոլդի Լիպպեի գրադարանի ամենայթանկարժեք նմուշներից մեկը:

Կարևոր ենք համարում նշել, որ ոչ միայն Քենփֆերի, այլև եվրոպական շատ այլ հեղինակների *album amicorum*-ները, որպես կանոն, դիտվում են՝ որպես շատ բարձր գրական և պատմագիտական արժեք ունեցող ստեղծագործություններ: Դրանց ձեռագիր տարբերակները հաճախ պահվում են այս կամ այն հայտնի գրադարանում՝ որպես թանկարժեք նմուշներ: Ավելին, այս նմուշները դարեր շարունակ խնամքով պահպանվում, հրատարակվում և հասանելի են դառնում ընթերցող լայն զանգվածներին այդ գրադարանների անմիջական աջակցության շնորհիվ:

Աշխատության՝ մեր կողմից դիտարկվող հրատարակությունը ներառում է 130 գրառում՝ կատարված այսօրվա սահմաններով 15 պետության տարածքում՝ ընդհանուր առմամբ 140 պահպանված էջ<sup>16</sup>: Գրառումները ներառում են հեղինակի՝ շուրջ քսան տարի տևած ճամփորդությունների ընթացքում՝ հավաքված ամենատարբեր բնույթի տեղեկատվություն, այդ թվում՝ նախագուշական խոսքեր, գովեստի վկայություններ, աղոթքներ,

---

<sup>15</sup> Քրիստիան Վիլհելմ Դոմը ֆինանսական գիտությունների պրոֆեսոր էր Կասսելի Collegium Carolinum-ում /Լ. Ա. /

<sup>16</sup> Պահպանված 140 էջում առկա են գրառումներ 26 տարբեր լեզուներով և խոսվածքներով՝ լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հունարեն, եբրայերեն, լեհերեն, ռուսերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, հնդկերեն, հունգարերեն, ֆիններեն, շվեդերեն, պորտուգալերեն, նիդերլանդերեն, ճավայերեն, լատսերեն, ճապոներեն, շվեդերեն, վրացերեն, հայերեն, սիամերեն: Կան նաև դեռևս չվերձանված արտահայտություններ (Լ. Ա.) :

բարեկամության հուշեր՝ զարդարված իմաստուն և ուսանելի մեջբերումներով, նույնիսկ՝ պարսկական և ճապոնական բանաստեղծություններ<sup>17</sup>:

Քեմփֆերի աշխատությունում ոչ բոլոր գրառումներն են թվագրված: Նման գրառումների դեպքում խմբագիրները մեծ աշխատանք են կատարել՝ հնարավորինս ճշգրտելով տարեթիվը և հեղինակի այլ ճանփորդական օրագրերի և նամակների օգնությամբ վերականգնելով գրառումների ժամանակագրությունը:

Էնգելբերթ Քեմփֆերի հուշագրքում ևս առաջին ութ գրառումներն արված են սոցիալական բարձր խավի ներկայացուցիչների կողմից<sup>18</sup>:

Ուշագրավ է, որ ինչպես Քեմփֆերի, այնպես էլ այլ եվրոպական հեղինակների ընկերագրքերում Գերմանիայում, Նիդերլանդներում, Լեհաստանում, Շվեդիայում եվրոպացի հեղինակների կողմից արված գրառումները իրենց կառուցվածքով և ոճով շատ նման են իրար: Նույնը չի կարելի ասել ասիական երկրներում՝ Պարսկաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում և այլ վայրերում կատարված գրառումների մասին, որոնք չունեն ոճային գրեթե ոչ մի ընդհանրություն: Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Եվրոպայում հուշագրքերի ժանրը տարածված էր և, գրեթե բոլոր մտավորականները տիրապետում էին դրանց կազմման նրբություններին: Մինչդեռ Արևելքում այն անձանոթ գրական ուղղություն էր, և գրառումներ կատարողները պարզապես անտեղյակ էին *album amicorum*-ում նշումներ կատարելու կանոններին:

---

<sup>17</sup> Գրառումների շրջանակը բազմազան է՝ ներառյալ հեղինակի հայրը, լեհ դասախոսներ, եվրոպական գիտնականներ, հոլանդացի վաճառականներ, ճապոնացի թարգմանիչներ իշխաններ և բարձրաստիճան պաշտոնյաներ:

<sup>18</sup> Առկա են Սրբազան Հռոմեական կայսրության իշխանների, լեհական կոմսի, պարսկական տիրապետության տակ գտնվող Շիրվանի գեներալ նահանգապետի, շվեդական բարոնի և այլոց կողմից:

Հետաքրքիր է նաև, որ Արևելյան երկրներում Քենմիֆերի հուշագրքում ոչ բոլոր գրառում կատարողներն են դրական տրամադրված հեղինակի նկատմամբ: Օրինակ, 1684 թ. արված N 84 գրառման մեջ Իրանի Սավեհ քաղաքի ղեկավար Մոհամմեդ Սախըը գրում է «Դու ոչ պերճախոսություն ունես, ոչ էլեգանտություն...»՝ վերջում ավելացնելով իր բոլոր տիտղոսները<sup>19</sup>: Հավանաբար հեղինակը հաշվի չի առել, որ Քենմիֆերը կարողացել է կարդալ և հասկանալ իր գրառումը:

Մեծ աշխատանք է կատարվել նաև տարբեր գրառումներում օգտագործված ոչ միանման թվագրությունը հնարավորինս նույն օրացույցային համակարգով ներկայացնելու հարցում: Աշխատության տարբեր համակարգողներ և հրատարակիչներ տարբեր ժամանակներում գրառումները թվագրել են համաձայն հուլյան, գրիգորյան, երբեմն նույնիսկ անտիկ հռոմեական օրացույցների: Ավելի ուշ շրջանի գրառումներում կարելի է հանդիպել նաև իսլամական, թայյանդական, հնդկական, ճապոնական թվագրությամբ հիշատակություններ: Սույն հրատարակության խմբագիրները համակարգել են բոլոր նմանատիպ գրառումները՝ դրանք ներկայացնելով մեկ միասնական տրամաբանության շրջանակներում:

Ժամանակագրական առումով հուշագիրքը բաղկացած է հեղինակի կյանքի և ճամփորդությունների հինգ տարբեր փուլերն ընդգրկող հատվածներից: Առաջին խմբի մեջ ընդգրկված են 1674 - 81 թթ.՝ Լեհաստանում սովորելու տարիներից մինչև Շվեդիա տեղափոխությունն արված գրառումները (յատիներեն): Երկրորդ խմբի մեջ հավաքված են 1681-83 թթ. Շվեդիայում և Ռուսաստանում արված գրառումները (յատիներեն, ռուսերեն, վրացերեն), երրորդ խմբում՝ 1683-88 թթ. Պարսկաստանում արված գրառումները (յատիներեն, արաբերեն, թուրքերեն), չորրորդ հատվածում հավաքված են Ճապոնիայում և Հնդկաստանում 1689-92 թթ. կա-

---

<sup>19</sup> Kempfer E., *Das Stammbuch...*, 2021, S. 280-282

տարված գրառումները (հարավարևելասահական լեզուներ): Վերջին՝ հինգերորդ հատվածում առանձնացված են այն գրառումները, որոնք կատարվել են Արևելքից Եվրոպա վերադարձի ճանապարհին՝ Բաթավիայում, Հարավային Աֆրիկայում և Հոլանդիայում (յատիներեն)<sup>20</sup>:

Մեզ համար առանձնահատուկ ուշադրության են արժանի սույն աշխատության մեջ զետեղված 71-րդ և 72-րդ գրառումները, որոնք հայատառ են և, դատելով հեղինակների անուններից, գրված են հայերի կողմից<sup>21</sup>: Երկու գրառումներն էլ արվել են Շամախիում<sup>22</sup> և թվագրվում են 1684 թ. հունվարի 6-ով<sup>23</sup>: N 71 ձեռագրի հեղինակն Առաքելն է, որի մասին անունից գատ որևէ այլ հիշատակություն չկա: Այս գրառման պահպանված ամբողջական հայատառ տեքստը հետևյալն է.

«Ողջուն ընդ քեզ Մարիամ տեր ընդ քեզ օրհնե[ա]/ ես դու ի կանայս և օրհնե[ա] է պտուղ որովայնի քո/ Յ[իսու]ս Զ[րիստո]ս Ս[ուր]բ Մա(մ)րիամ մայր Ա[ստուածո]յ բարեխոսեայ աղ [?] Տ[է]ր/ վ[ա]սն մեր մեղաւորացս այժմ և ի ժամ մահու մերու/մ. Ամեն: Ես տ[էր] Առաքելս գրեցի թվին ՌՃՂԳ՛ / յունվարի Զ՛ օրն ուրպաթ. և որ էր Յայտնութի[իւն]: / ի քաղաքն Շամախի»:

Հայատառ այս գրառման մեջ հեղինակը վերարտադրում է Գաբրիել հրեշտակապետի կողմից Մարիամ Աստվածածնի Ավետման աստվածաշնչյան դրվագը:

N 72 ձեռագրի հեղինակը տեքստի սկզբում ներկայանում է՝ որպես Մարտիրոս՝ որդի Մուրադխանի: Քանի որ երկու հայերեն

---

<sup>20</sup> **Kempfer E., Das Stammbuch...**, 2021, S. 464-465

<sup>21</sup> Քենիֆերի ընկերագրի՝ մեր կողմից ուսումնասիրվող հրատարակությունում N 71 և N 72 ձեռագրերի թարգմանությունների և բանասիրական մեկնաբանությունների հեղինակը **Ա. Բոզոյանն է** /Լ.Ա./: Տե՛ս **Kempfer E., Das Stammbuch...**, 2021, S. 230-233 :

<sup>22</sup> Շամախին ճանապարհորդության Կովկասյան ուղղության հերթական կանգառն էր շվեդական պատվիրակության համար, որի կազմում էր նաև Ե. Քենիֆերը (Լ.Ա.) :

<sup>23</sup> Das Stammbuch Engelbeerts Kaempfers, Eintrag 71, 72, SS. 230-233 :

գրառումների տարթեվերը համընկնում են, երկուսի դեպքում էլ համընկնում է շաբաթվա օրը՝ ուրբաթ, իսկ N 71 գրառման հեղինակ Առաքելը որպես գրառման օր հիշատակում է Աստվածահայտնության օրը՝ հունվարի 6, առկա է ենթադրություն, որ N 72 գրառումը ևս արված է հունվարի 6-ին<sup>24</sup>:

Այս գրառման տեքստը հետևյալն է.

«Մարտիրոս որդի[ի] Մուրադիսան տեսի հաքիմս Ընկը/բերթ Կ[ե]մ[ա]յֆ[ե]ռ. Գրեց ի Շամախի: Թվին Ռ՛ՃԼԳ՛ին. Աւրն ուրբաթ:/ բանից իմոց ուն[կ]դիր Տ[ե]ր և միտ առ զաղաղակ իմ/նայ ձա[յ]նավ [?]:»:

N 72 գրառման հեղինակի մասին ևս բացի անունից այլ տեղեկություն հայտնի չէ:

Ուշագրավ է, որ այս հայերեն գրառման վերջում պահպանվել է Քեմփերի գերմաներեն հավելումը՝ “auch gesprochen” (հայերեն՝ «նաև խոսվել է», Լ.Ա.), որը թույլ է տալիս ենթադրել, որ հեղինակը ոչ միայն հնարավորություն է տվել Մարտիրոսին իր ընկերության գրքում թողնել այս գրառումը, այլ նաև այն բանավոր ներկայացնել կամ կարդալ իր համար: Առավել ևս, որ Քեմփերն իր տարբեր օրագրերում քանիցս նշել է, որ տեղեկատվության արժանահավաստությունը մեծացնելու նպատակով ինքը նախընտրում էր այն գրառման հեղինակներից ստանալ նաև “ab ore” բանավոր խոսքի միջոցով:

Այսպիսով, 1674-1694 թթ., բազմաթիվ կանգառներով ճանապարհորդելով Եվրոպայից մինչև Հեռավոր Արևելք, Էնգելբերտ Քեմփերին հաջողվել է ստեղծել մի ինքնատիպ և արժեքավոր աշխատություն, որն իր մեջ ներառում է տարբեր և՛ քննարկվող ժամանակաշրջանում Գերմանիայում լայնորեն տարածված «դասական», լատինալեզու *album amicorum*-ներից, և՛ իր այցելած տարբեր երկրների՝ մինչ այդ Եվրոպային անծանոթ մշակույթներ-

---

<sup>24</sup> Մանրամասն տե՛ս **Das Stammbuch Engelbert Kaempfers, Eintrag 72, S. 233**

րից, լեզուներից ու գրային համակարգերից՝ այդպիսով գիտությանը թողնելով մի յուրօրինակ, հաշողված և նախադեպը չունեցող փաստաթուղթ:

Հրատարակիչների կողմից կատարված աշխատանքի բարձր որակի մասին են խոսում նրանց կողմից մանրակրկիտ կազմված անձնանունների և մատենագիտական ցանկերը<sup>25</sup>, որոնք էլ ավելի են հեշտացնում Քեմփերի աշխատության համակողմանի ուսումնասիրությունը:

Ամփոփելով Էնգելբերթ Քեմփերի աշխատության օրինակով *album amicorum* գրական-պատմագրական ժանրի մասին դիտարկումները՝ պետք է նշել, որ ԺՉ դարից ի հայտ եկած այս հուշագրքերը պարունակում են կարևոր տեղեկություններ տարբեր երկրների, մշակույթների, կրոնների և քաղաքական իրադարձությունների մասին, որոնք զրկված են սոցիալական տարբեր դիրքի, մասնագիտության, աշխարհայացքի և հավատի տեր մարդկանց կողմից: Իրենց տեսակի մեջ երբեմն անգամ բացառիկ գրառումներ պահպանող այս գրքերը լայն հնարավորություն են ընձեռում պատմական ժամանակաշրջաններն ու իրադարձությունները բացահայտել նորովի, բոլորովին այլ տեսանկյունից և արժանի են առավել հանգամանալից ուսումնասիրության:

## **DAS STAMMBUCH ENGELBERT KAEMPERS**

*L. Aghabekyan*

### **Summary**

Since the 16th century in a number of German universities, the so-called genealogical books, which were also known as *album amicorum* - the book of the friendship, are in use. During that period, students and

---

<sup>25</sup> Das Stammbuch Engelbert Kaempfers, 2021, SS. 484-497

scholars took small notebooks with blank pages with them during their travels, where their friends, acquaintances, or notable people they met along the way left their notes. Taking as an example the German scientist E. Kaempfer's similar work, the structure of album amicorum, the methodology of their formation, the influence of significant historical events of the time on them, as well as the role of friend-books as a reliable source in the coverage of various historical events have been analyzed in the following article.

## **Bibliography**

**Hiller** 1946-47 - Die Französische Revolution im Stift und die Tübinger Studentenschaft. Das Stammbuch des C. F. Hiller, Tübinger Blätter, Tübingen, UB, S. 34-48

**Kaempfer** 1906 - E. Kaempfer, 1651-1716: *The History of Japan, Together with a Description of the Kingdom of Siam, 1690-92* (3 volumes; includes an appendix on a 1673 voyage to Japan by Delboe, Gibben, and Ramsden; Glasgow: J. MacLehose and Sons; New York: Macmillan .

**Kaempfer** 2021 - Das Stammbuch Engelbert Kaempfers, kritische Edition und Kommentar, Herausgegeben von Lothar Weiß, Detlef Haberland, Michael Bischoff und Joachim Eberhardt, Weidmannsche Hildesheim .

**Kurras** 1987 – L. Kurras, Zu gutem Gedenken. Kulturhistorische Miniaturen aus Stammbüchern des Germanischen Nationalmuseums, 1550–1770, Prestel, München 1987 .

**Loesch** 2003 - P. Loesch, Der Freundschaft Denkmal. Stammbücher und Poesiealben aus fünf Jahrhunderten im Bestand der Sächsischen Landesbibliothek – Staats- und Universitätsbibliothek Dresden, Dresden 2003 .

**Meier-Lemgo** 1968 – K. Meier-Lemgo, Die Reisetagebücher Engelbert Kaempfers, Steiner, Wiesbaden, 1968 .

- Meier-Lemgo** 1937 – K. Meier-Lemgo, Engelbart Kämpfer, der erste deutsche Forschungsreisende 1651-1716, Stuttgart, Strecker und Schröde, 1937 .
- Objartel** 2016 - Objartel Georg, Memorabilien in Studenten-Stammbüchern. - In: Georg Objartel: Sprache und Lebensform deutscher Studenten im 18. und 19. Jahrhundert. Aufsätze und Dokumente (= Studia Linguistica Germanica. 123). De Gruyter, Berlin, S. 105–126 .
- Schnabel** 2003 – W. W. Schnabel, Das Stammbuch. Konstitution und Geschichte einer textsortenbezogenen Sammelform bis ins erste Drittel des 18. Jahrhunderts. Tübingen 2003 (Frühe Neuzeit, 78).
- Stammbuch Herzog Augusts** 2002 - Literatur im Lebenszusammenhang: Text- und Bedeutungskonstituierung im Stammbuch Herzog Augusts des Jüngeren von Braunschweig-Lüneburg (1579-1666), Frankfurt am Main; Berlin; Bern; Bruxelles; Mikrokosmos .
- Taegert** 1995 - W. Taegert, Edler Schatz holden Erinnerns. Bilder in Stammbüchern der Staatsbibliothek Bamberg aus vier Jahrhunderten, Bamberg, Staatsbibliothek 1995 .
- Walther** 2006 – L. Walther, Das Stammbuch als Bestandteil humanistischer Kultur. Das Album des Heinrich arlhack Hermeling (1587 - 1592), Göttingen 2006, Folge 3, Bd 274 .